

Թիւ 20010

Նոյեմբեր 15, 1967

Բարեջնորհ  
Մինաս Ասրկաւազ Մալուսեան  
Ասրկաւազ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Նորթ ՏիլատեյՏիւ.

Սիրելի Մինաս Ասրկաւազ,

Ուրախ եղանք իմանալով որ Նորթ ՏիլատեյՏիւոյ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Միակեան Խորհուրդը ծրագրած է հանդիսանալով համայնքի կազմութեան յիսնամեակը, եկեղեցիի սեփականատիրութեան քառասնամեակը եւ Նորակառոյց եկեղեցւոյ օծման առաջին տարեդարձը, եւ այդ առթիւ, ուրիշ արժանաւոր անձերու կարգին, մեծարել նաեւ Ձեր սիրելիութիւնը:

Ձեր անձին եւ զործին հանդէպ եղած այս գնահատութեան արտայայտութիւնը հաճելի է նաեւ մեզի համար: Որովհետեւ գիտենք որ դուք, լման քառասուն տարի առաջ, տակաւին թարմ երիտասարդ, սկսած էք նուիրումով եւ գիտակցութեամբ ծառայել տեղիդ եկեղեցւոյն նախ իբրեւ զպիւր ու զպրպպետ եւ ապա իբրեւ սարկաւազ: Այսքանը բաւական չհամարելով, Ձեր առօրեայ պարտաւորութիւններէն դուրս, եկեղեցւոյդ այն գծուար օրերուն, երբ համայնքը յաճախ կը մնար առանց հովիւի, դուք կարողացած էք վարել արարողութիւնները, համախումբ պահել համայնքի ժողովուրդը եւ խումբ մը հաւատացեալներու հետ գործակցաբար յաշոգած էք կազմել Թեմիս Դպրաց Դասերու Միութիւնը:

Բաց աստի, դուք յաշոգած էք ըլլալ վստահելի գործակիցը Հոգեւոր Հովիւին եւ Միակեան Խորհուրդին: Եւ Ձեզի նման նախանձախնդիր ազգայիններու օգտաշատ գործունէութեան շնորհիւ, Նորթ ՏիլատեյՏիւոյ մեր համայնքը, ապէ՛տ քսանեւհինգ տարի առաջ, կրցած է ունենալ իր սեփական եկեղեցին, եւ մէկ տարի առաջ այ քաջառիկ շանք կատարելով յաշոգած է լրացնել Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ գեղեցիկ շէնքի շինութիւնը, յարակից սրահով, դասարաններով եւ այլ յարմարութիւններով:

Վստահ ենք որ Հայու եւ քրիստոնեայ մարդու Ձեր հոգին կը հրճուի այսօր, երբ կը մտաբերէք հաւաքական աշխույժ աշխատանքով ձեռք բերուած գմայելի արդիւնքը Աստուծոյ փառքին համար եւ յօգուտ Յայաստանեայց Եկեղեցւոյ պայծազութեան եւ ազգային կեանքի ծաղկումին:

Կը գնահատենք Ձեր կատարած աշխատանքները Հոգեւոր, երաժշտական եւ կազմակերպչական մարզէն ներս, եւ կ'օրհնենք Ձեզ եւ Ձեր հարազատները: Մեր շնորհակալ մաղթանքն է որ դուք մնաք քաջառողջ եւ գեռ երկար տարիներ կարենաք Ձեր ծառայութիւնը ի սպաս դնել Նորթ ՏիլատեյՏիւոյ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ եւ տեղւոյն համայնքի քարգաւաճութեան սատարող գործերու արդիւնաւորութեան համար:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԵՊՈՍԿՈՊՈՍ  
ԱՌԱՋՆԱՐԿ

Թիւ 20011  
Նոյեմբեր 15, 1967

Համեստապաշէ  
Օրինոր Ազանի Բարունակեան  
Տեսուչ Կիրակնօրեայ դպրոցի  
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Նորթ Յիլատեւիա.

Սիրելի Օր. Բարունակեան,

Հանձնէիքմեզ Համար տեղեկանալ որ Նորթ Յիլատեւիոյ Ս. Երրորդութիւն  
Եկեղեցւոյ Մտակն Խորհուրդը ծրագրած է Հանդիսաւորել Համայնքի կազմութեան  
յիսնամեակը, եկեղեցիի սեփականատիրութեան քառասնամեակը եւ Նորակառոյց եկե-  
ղեցւոյ օճման առաջին տարեդարձը, եւ այդ առթիւ, ուրիշ արժանաւոր անձերու  
կարգին, մեծարել նաեւ Ձեր սիրելութիւնը:

Ձեր գործունէութեանց մասին մեր ունեցած ծանօթութիւնը, եւ եկեղեցւոյդ  
Հոգեւոր Հովիւի կողմէ մեզի տրուած յաւելեալ տեղեկութիւնները Ձեր ստանձնած  
պարտականութիւններուն վերաբերեալ, երաշխիսն իսկ են Ձեր աննկատառութեան  
եւ նախանձախնդրութեան: Իրբեւ ազնուարարոյ, կրթեալ եւ պատրաստուած քրիս-  
տոնեայ Հայուհի, դուք, ապէլ քառասուն տարի առաջ, դեռ Թարմատի աղջիկ, փա-  
կաքեցաք զորեկ եկեղեցական Համայնքին մէջ, զլիաւորաբար Ձեր ժամանակը յատ-  
կացնելով մեր նորահաս սերունդի Հոգեւոր դաստիարակութեան:

Եկեղեցիին մէջ իրբեւ զպրուհի եւ զպրապետուհի նուիրեալ Ձեր ծառայու-  
թեան համբարաց, եւ մերթ ալ առանձնապէս, դուք վարած էք կիրակնօրեայ դպրոցի  
տեսչութեան պաշտօնը, յայտ բերելով յարատեւութեան կորով, լաւատեսութիւն եւ  
դաստիարակի գնահատելի ընդունակութիւն:

Ձեզի նման Հաւատաւոր Հոգիներու անդադրում տարած աշխատանքներուն շնոր-  
հիւ Նորթ Յիլատեւիոյ մեր Համայնքը, մանաւանդ վերջին քսանեւեցինգ տարինե-  
րու ընթացքին կարողացած է նախ սեփականատէրը ըլլալ եկեղեցիի մը եւ ապա կա-  
ռուցանել գեղեցիկ եկեղեցի մը, յարակից սրահով եւ դասարաններով:

Կը մաղթենք որ քաջառողջ մնաք երկար տարիներ եւ կարենաք Ձեր Հոգեկան  
ու իմացական ուժը ի սպաս դնել Աստուծոյ փառքին Համար եւ Հայաստանեայց Եկե-  
ղեցւոյ պայծառութեան եւ Համայնքային կեանքի յառաջդիմութեան համար:

Կ'օրհնենք Ձեզ եւ Ձեր ընտանեկան պարագաները եւ կը մաղթենք ամենուր  
առողջութիւն Հոգիի եւ մարմնի:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ  
Աաշնորդ

Քիւ 23303  
Նոյեմբեր 18, 1968

Հոգեշնորհ  
Տ. Զաւէն Ծ. Վրդ. Արզումանեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ  
Զէլթընմ.

Սիրելի Հայր Զաւէն,

Մեզ համար համոյք էր եկեղեցւոյ ժողովուրդը որպէս ուխտաւոր  
ընդունիլ Սուրբ Վարդան Մայր Տաճարէն ներս անցնել ամսու 27ին:  
Ար յուսանք այդ ուխտագնացութիւնը իմաստաւից էր ծուխիդ ժողովուր-  
դին համար:

Այս առթիւ ընդունեցէք մեր խորին շնորհակալութիւնը նոյն առթիւ  
Մայր Տաճարի մէջ եկեղեցւոյ անունով հաւարուած գումարը--198.81  
տոլար--Մայր Տաճարին նուիրուելուն համար: Ձեր եկեղեցւոյ անունով  
կը ջանանք բան մը զնել Մայր Տաճարի համար:

Սիրոյ ողջունիւ

ՎԱԶԳԵՆ ԵՊՍ.ԳԸԳՐԸՍԼԸԱՆ  
Առաջնորդի Քոխանորդ

Թիւ 21883  
Յունիս 25, 1969

Հոգեշնորհ  
Տ. Զաւէն Ժ. Վրդ. Արզումանեան  
Հովիւ Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ  
եւ Սախազան Ժիական Խորհուրդի  
Նորթ Ֆիլատելիա.

Սիրելի Հայր Զաւէն,

Թեմական Պատգամաւորական փողովը, որ գումարուեցաւ Մայիս 2 եւ  
Յին, Ուաթըրթաունի Ս. Փակոբ Եկեղեցւոյ մէջ, որոշեց 1970 Մայիսի  
առաջին շաբթուն նորթ Ֆիլատելիոյ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ  
գումարել Յերդ Տարեկան Թեմական Պատգամաւորական փողովը:

Թեմական Պատգամաւորական փողովի սոյն որոշումը Ձեզի հաղորդելով,  
կը յանձնարարենք որ այժմէն ի նկատի ունենաք այդ թուականը եւ ըստ  
այնմ անհրաժեշտ կարգադրութիւնները կատարէք:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐԸԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Քիւ 22760  
Դեկտեմբեր 22, 1970

Հոգեշնորհ  
Տ. Հաւէն Ծ. Վրդ. Արզումանեան  
Հովիւ Ս. Սրբորդութիւն Հայց. Եկեղեցւոյ  
եւ Ստիագահ Ժիական Խորհուրդի  
Նորթ ֆիլասելֆիա.

Սիրելի Հայր Հաւէն,

Կր փափաքինք մեր սրտագին գնահատանքը յայտնել Ձեզի, Ս. Սրբորդութիւն Եկեղեցւոյ անունով կատարուած այն հանդիսութեան համար որով մեր ըսանայական ձեռնադրութեան երեսնամեակը նշուեցաւ Դեկտեմբեր 13, 1970, Շաբաթ երեկոյ, երբ մենք համայնքիդ մէջ կը գտնուէինք նոր Եկեղեցւոյ օձման 4րդ տարեդարձը տօնախմբելու համար:

Հաճեցէք մեր սիրոյ եւ գնահատութեան զգացումները յայտնել ծիական Խորհուրդիդ, հանդիսութեանց կարգադիր յանձնախումբի անդամներուն, եւ թոյր այն ազնիւ հոգիներուն որոնք իրենց մասնակցութիւնը բերին ուրախաբար տօնախմբութեանց: Մասնաւոր շնորհակալութիւն զեղեցիկ եւ մեծադիր այն դիմանկարին համար, զոր արուեստագէտի ճաշակով պատրաստած էր Տիար Անդրանիկ Ռէվարճեան:

Կր մաղթենք <sup>որ</sup> Աստուծոյ օրհնութիւնը անպակաս մնայ համայնքիդ թոյր անդամներուն վրայէն:

Սիրոյ ողջունիւ

ՔԱՐԿՈՄ ԱՐՉԵՊՈՍԿՈՍՄՈՍ  
Առաջնորդ



# Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ  
ԲՈՐԿՈՍ ԱՐԲԵՎԻՍԿՈՍՈՍ ՄԱՆՈՒԿԵՆ  
Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016 \* MURRAY HILL 6-0710

Archbishop Yerkon Mamogian, Primate

Թիւ 25008  
Օգոստոս 31, 1971

Հոգեշնորհ  
Տ. Զաւէն Ծ. Կրդ. Արզումանեան  
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Մախազան Ժխական Խորհուրդի  
Սորթ Ֆիլատելիա.

Սիրելի Հայր Զաւէն,

Ձեր ինդրամբին ընդառաջելով որոշած ենք Ձեզ ազատ կացուցանել  
Սորթ Ֆիլատելիոյ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ հոգեւոր հովիւի  
պաշտօնէն:

Սորթ Ֆիլատելիոյ մեր յաւանդածին հոգեւոր հովիւ նշանակած ենք  
Տ. Ս. քայէլ Զնյ. Դուրեան, որ իր նոր պաշտօնին պիտի ծնունարկէ  
Սեպտեմբեր 15, 1971էն սկսեալ:

Այս առիթով մեր գնահատանքը կը յայտնենք Սորթ Ֆիլատելիոյ Ս.  
Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ Ձեր կատարած հովուական ծառայութեանց  
համար: Աստա՛ն հնր Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մեր համայնքը  
երախտագիտութեամբ պիտի յիշէ հե՛ր տարիներու Ձեր հոգեւոր առաջ-  
նորդութիւնը ո՛ր նպաստ Եկեղեցւոյ կազմակերպութեանց եւ հաւատացեալ-  
ներու իմացանան, հոգեւոր եւ մշակութաւորին կեանքի գորացման եւ յա-  
ռաջդիմութեան:

Կը մաղթենք որ ասանց դժուարութեան իրագործէք Ձեր առաջադրու-  
թիւնը կրթական մարդի մէջ, առաւել օգտակարութեամբ շարունակելու  
համար Ձեր ծառայութիւնը մեր թեմի համայնական կեանքէն ներս:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԿՈՍ ԱՐԲԵՎԻՍԿՈՍՈՍ  
Առաջնորդ

Քիւ 28110  
Սեպտեմբեր 1, 1971

Մեծայարգ  
Տիար Շան Միրաքեան  
Աանապետ Ժիական Խորհուրդի  
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Նորթ ֆիլասելֆիա.

Սիրելի Գրն. Միրաքեան,

Ներքակ շեղի կը դրկենք օրինակը մեր նամակին որ ուղղուած է Տ. Մի-  
քայէլ ԶՆՅ. Դուք ինչ կը նշանակենք հոգեւոր հովիւ Նորթ  
ֆիլասելֆիոյ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մեր համայնքին, եւ ճշդած ենք  
այն կարիքները զորս Ժիական Խորհուրդը պարտի հոգալ, Տ. Միքայէլին ֆի-  
լասելֆիա փոխադրուելով հոգեւոր հովիւի պաշտօն ստանձնելէն յետոյ; Սեպ-  
տեմբեր 15, 1971 թուականէն սկսեալ:

Կը մաղթենք որ Աստուծոյ օրհնութիւնը անպակաս ըլլայ Ժիական Խորհուրդիդ  
եւ համայնքիդ բոլոր անդամներուն վրայէն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԵԵԳԻՍԿՈՒՊՈՍ  
Առաջնորդ

#իւ 28107  
Սօցստոս 31, 1971

Հոգեշնորհ  
Տ. Լեւոնդ Արդ. Սամուրեան  
Հովիւ Արրոց Կարդանանց Եկեղեցւոյ  
Սախազահ Ժիական Խորհուրդի  
Լոկէլ:

Օրհնելի Հայր Լեւոնդ,

Հէյվորթիի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ հովիւ Տ. Սիբայէլ  
Քհնյ. Գուլթերոն հովուական պաշտօնով պիտի փոխադրուի Ֆիլաճեկիս,  
Սեպտեմբեր 15էն սկսեալ: Հէյվորթիի մեր համայնքին համար մինչեւ  
որ հովիւ մը նշանակենք, յանձնարարած ենք Տ. Սիբայէլին եւ Ժիական  
Խորհուրդին որ Զեզի հետ հաղորդակցելով ճշդին այն կիբակիները որ  
դուք պիտի կարենաք օգնել իրենց Հէյվորթիի մեր Եկեղեցւոյ մէջ Ս.  
Կասարագ շատուցանելով:

Յոր դուք Ս. Կասարագ մատուցանէք Հէյվորթիի Ս. Գրիգոր Լուսա-  
ւորիչ Եկեղեցւոյ մէջ, Ձեր Ժիական Խորհուրդը պիտի ստանայ 75 (եօթա-  
նասուն հինգ) տոլար Ձեր բազակայուլթեան համար, նաեւ պիտի հոգազուի  
Ձեր ծամբու ծախքը, Հէյվորթիի Ժիական Խորհուրդին կողմէ:

Քննադրած ենք Հէյվորթիի Ժիական Խորհուրդին որ անհրաժեշտութեան  
պարագային Զեզի դիմէ հոգեւոր կարիքներու մատակարարման համար:

Կը յուսանք որ մօտիկ ապագային պիտի կարենանք հոգեւոր հովիւ մը  
նշանակել Հէյվորթիի մեր համայնքին համար, առանց Զեզ աւելի ծանրա-  
բեռնելու:

Սիրոյ ողջունել

ԽՈՐՀԱՄ ԱՐՁԵՊԻՍԿՈՍՈՍ  
Առաջնորդ

--Նորիւ. օրինակ՝ Տ. Սիբայէլ Քհնյ. Գուլթերոյի



Very Reverend  
Zaven Arzoumanian,  
Pastor

(Area Code 215)  
Church: ESsex 9-2515  
Residence: RAndolf 5-6999



**HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH**  
101 ASHMEAD ROAD, CHELTENHAM, PENNSYLVANIA 19012

Մայիս 12, 1971

Գերաշնորհ  
Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի եւ Գանատայի

Նիւ Եորք


Գերաշնորհ եւ Սիրելի Սրբազան Հայր,

Ճեսկան խորհուրդիս անունով կը փափաքիմ պատասխանել Ձեր  
Սպրիւ 21 Թուակիր նամակին որով համայնքիս հովիւի փոփոխութեան  
մասին որոշ առաջարկ մը ներկայացուցած էիք:

Երկու նիստերու մէջ խորհրդակցելէ ետք ժողովականք  
վերջնական որոշման մը չյանգեցան Արժ. Տ. Միքայէլ ՔՏՆՅ. Պիւ-  
թերոյի մասին: Հասկնալի եղաւ որ նախընտրութիւն չկար այս մասին:

Երեկուան մեր նիստին ես իմ հրատարման թուականը յետա-  
ձգեցի մինչեւ Սեպտեմբերի վերջը, 1971: Առ այժմ, հետեւաբար,  
խնդիրը կը մնայ այսպէս ցնոր տնօրինութիւն: Հասկնալի է որ Ձեր  
Սրբազնութիւնը տեղեակ պիտի պահուի անմիջապէս որ նոր Թե-  
լադրութիւն մը կամ առաջարկութիւն մը երեւանա գայ:

Մասնաւոր շնորհակալութիւն իմ եւ Ճեսկան խորհուրդի կողմէ  
Ձեր անմիջական ուշադրութեան համար:

Սիրով եւ աղօթակիրք,  
  
Զաւէն ծ Վրդ Արզումանեան  
Հովիւ

Մարտ 30, 1973

Ազնուափայլ  
Տիկին Կերբին Սէմէրճեան  
Ֆիլատելիա.

Սիրելի Տիկին Սէմէրճեան,

Շատ կը ցաւիմ որ այս գիրը ակնկալուածէն աւելի ուշացուցի:  
Երէկ հագիւ կրցայ Առաջնորդարանի Թատերախումբի վարիչին հետ  
կարգադրութիւն մը ընել:

Ինձի խօսք տրուեցաւ որ Թատերախումբը պիտի կարողանայ Նոյ-  
25, կիրակէ յետ միջօրէին, Առաջնորդարանի Օժանդակ Միութեան  
հովանաւորութեամբ ֆիլատելիոյ մէջ ներկայացնել "Ասամնարուժն  
Արեւելեան" կատակերգութիւնը, որուն փորձերը ներկայիս կը կա-  
տարուին:

Ստորեւ կուտամ խումբի պատասխանատու անդամներէն Սեդրակ  
Քոփանճեանի գրասենեակի եւ բնակարանի հեռաձայնի թիւերը, որպէս-  
զի ի հարկին իրեն հետ հաղորդակցիք մանրամասնութեանց համար:

Ձեզի եւ Գեարդոսին կը յայտնեմ լաւագոյն զգազումներուս ու  
կը մաղթեմ Օժանդակ Միութեան բոլոր անդամներուն կորով եւ յա-  
ջողութիւն իրենց ձեռնարկութեանց մէջ:

Խորին յարգանք

Սուրէն Մանուէլեան

Սեդրակ Քոփանճեանի հեռաձայնի թիւերը

Գրասենեակ՝ 201-589-7416

Բնակարան՝ 201-262-2056

Քիւ 24895

Սեպտեմբեր 20, 1974

Մեծայարգ  
Տիար ժէր Վիշապ  
Ասեմապետ Ժիական Խորհուրդի  
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Չէլթընհէմ, Փա.

Սիրելի Տիար ժ. Վիշապ,

Հոգշ. Տ. Արշէն Վրդ. Այվազեանի հետ Ժիական Խոր-  
հուրդիդ ունեցած տեսակցութեան եւ խորհրդակցութեան հի-  
ման վրայ, Հայր Արշէնը կը նշանակենք Հոգեւոր Հովիւ  
Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ մեր համայնքին:

Հայր Սուրբ 1974 Հոկտեմբեր 7ին պիտի փոխադրուի  
Ֆիլաաելֆիա, եւ Հոկտեմբեր 18, Պիրակի օր, առաջին Ս.  
Գառարազը պիտի մատուցանէ իբրեւ Հովիւ Ս. Երրորդութիւն  
Հայց. Եկեղեցւոյ:

Կ'աղօթենք որ Աստուծոյ շնորհը անպակաս ըլլայ մեր  
համայնքի անդամներուն վրայէն, եւ Ժիական Խորհուրդին  
եւ Եկեղեցւոյ մէջ զործող կազմակերպութեանց զործակցու-  
թեամբ Հոգեւոր Հովիւին ջանքերը արդիւնաւորուին, անց-  
նելու համար Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ հոգեւոր, կր-  
թական եւ ընկերային կեանքը, Աստուծոյ փառքին եւ մեր  
Սուրբ Եկեղեցւոյ պայծառութեան համար:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Քիւ 24652

Հոկտեմբեր 9, 1975

Հոգեշնորհ  
Տ. Արշէն Վրդ. Այվազեան  
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Նախագահ Երեւան Խորհուրդի  
Չէլթընհամ.

Սիրելի՛ ճանաչ Արշէն,

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Սեպտ. 24, 1975  
թուակիր նամակով կը հաղորդէ մեզի թէ Միաց. Նահանգներ  
աւլիր իր զովուապետական այցելութիւնը յետաձգած է 1977  
թուականին, որուն քաջաբախտ որ յառաջիկայ օտարի Ս. Էջ-  
միածնի մէջ տեղի պիտի ունենան Միւրոնօրհնութեան եւ Մեր  
զահակալութեան քանամեակի հանդիսութիւնները՝ կ'աւելցնէ  
նորին Արքութիւնը:

Ձայս կը հաղորդենք ձեզի որպէս զի 74րդ Ճարեկան Թե-  
մական Գաղափարական Ժողովի Կարգադիր Յանձնախումբը նը-  
կատի ունենայ այս պարագան եւ ըստ այնմ կազմէ իր ծրագիր-  
ները:

Սիրոյ ողջունիւ

ՔԱՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ